

Ա. Ս. Զեյրուցյան

ԵՆԹԱԿԱՅԻ ԵՎ ՍՏՈՐՈԳԵԼԻԱԿԱՆ ՎԵՐԱԴՐԻ ԹՎԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Ենթակայի և ստորոգյալի թվի համաձայնության մասին խոսելիս սխալ կլիներ զանց առնել ենթակայի և ստորոգելիական վերագրի թվի համաձայնությունը, քանի որ վերջինս առաջինի բաղկացուցիչ մասն է։ Այս հարցի հետաքրքրականությունը մեծանում է նրանով, որ բաղադրյալ (անվանական, ստորոգյալ ունեցող նախադասությունները) դիտվում են իբրև նախադասության հնագույն ձևեր¹։

Ի տարբերություն ենթակայի և ստորոգյալի թվի համաձայնության, որտեղ ստորոգյալի թիվը կախված է բացարձակապես ենթակայի թվից (նկատի չունենք առանձին խոտորումները), ստորոգելիական վերագրի թիվը կախված է հատկանիշների թվային այն առումից, հարաբերությունից, որ վերագրվում է ենթակային։ Ստորոգելիական վերագրի բզակի կամ հոգնակի դնելով հեղինակը ցույց է տալիս ենթակային (եզակի, թե հոգնակի թվով դրված՝ միևնույն է) վերագրվող հատկանիշների թիվը՝ այն, թե ենթակային վերագրվող հատկանիշները մեկ ամբողջություն են կազմում, թե՝ առանձին միավորներ են։ Այսպիսով ենթական (հոգնակի, բազմակի կամ հավաքական) կարող է բաղադրյալ ստորոգյալի դեպքում մերթ եզակի, մերթ հոգնակի ստորոգելիական վերագրի ընդունել։ Նման դեպքերում ստորոգյալի թվի համաձայնությունը ամբողջությամբ իր վրա է վերցնում հանգույցը², իսկ ստորոգելիական վերագրի թվային հարաբերություններ արտահայտելու պաշտոնն է ստանձնում³։

Այժմ տեսնենք, թե եզակի և հոգնակի (նաև բազմակի ու հավաքական) ենթակաները որ դեպքում որ թվով դրված ստորոգելիական վերագրի են ընդունում։

Եզակի թվով դրված ենթական սովորաբար եզակի թվով ստորոգելիական վերագրի է ունենում։ Այդ նշանակում է, որ մեկ անձի, իրի կամ երևույթի վերագրվում է մեկ՝ եզակի հատկանիշ։ Այս դրույթն ապացուցող շատ օրինակներ կան։ Բավականանա՞նք մի քանիսով. «Նշան թերահաւատից պիտոյ է» (Փ. IV, 2, 125), «Ծիծառն մաղդաւսէր է» (Ա. 339, 17), «Կարի ստամբակ ոմն

¹ И. К. Кусикьян, Очерки исторического синтаксиса литературного армянского языка, М., 1959, стр. 26, 36. Ամեն մի ստորոգյալ անվանական համարելու հնարավոր սխալներից խուսափելու համար լուրջ դիտողություններ ունի պրոֆ. էզ. Աղայանը, ՏԵՍ նրա Հայ լեզվաբանության պատմություն, II, Երևան, 1962, էջ 256—259։

² Ենթակայի ու հանգույցի (և առհասարակ ստորոգյալի) թվի համաձայնությունը այլ հոգնակի նյութ է և կազմում է մեր դիսերտացիոն աշխատության մյուս գլուխները։

³ Հմմտ. Д. Доза, История французского языка, М., 1956, стр. 355—356.

ես դու» (Եղ., 185, 3), «Հայրն անմիտ և տկար և յայլ ապաստան էր» (Ե, 96), «Բայց էր սա այլ քաղցր և խոնարհ» (Փ, VI, ԺԵ, 340) և այլն:

Եզակի ենթական հոգնակի թվով ստորոգելիական վերադիր է ընդունում այն դեպքում, երբ.

1) Եզակի ենթակային վերագրվում են միևնույն տեսակի բազմաթիվ հատկանիշներ: Այսպես. «Հեզութիւն սանձն է բարկութեան և շարժմանց ցասման և վնասակարաց լկտութեան» (Յ, 128), «Հեզութիւն քաղցր և անոյշ անշակի են՝ քմաց և ցածուցիչ խռովութեան ամբոխից» (Յ, 128), «Այս այն սիւնն են, ասէ, որ ունին զբեռն ծանրութեան ձերոյ շինուածոյն փրկութեան» (Ա, 400, 3): Օրինակների սակավությունից ինքնըստինքյան բխում է, որ ենթակայի և ստորոգելիական վերադիր թվային նման հարաբերությունը շատ գործածական չէ:

2) Ստորոգելիական վերագիրը անեզական բառ է: Օրինակ. «Միս ուտել... ոչ են մեղք» (Եղ., 26, 16), «Սա է կեանք ձեր» (ԵՕ, ԼԲ, 47), «Ես եմ ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք» (Ե, Խ, 217), «Մեծ հերձուած և անբժշկելի չարիք է այնպիսի առաջնորդութիւնն» (Ե, Խ, 218), «Բախտ անձնաւոր ինչ չէ, այլ դէպք աջողութեան» (Ե, 91), «Մտաց բարբաջանք են աղանդն և ոչ ճշմարտութիւն» (Ե, 175), «Խօսեցար ընդ մեզ միածին Որդւովդ քո... որ է պատկեր փառաց քոց և կերպարանք էութեան քո» (Փ, V, ԻԸ, 283):

Հոգնակի⁴, բազմակի կամ հավաքական ենթակաների ստորոգելիական վերադիրը եզակի թվով է դրվում, երբ հեղինակը տեսնում է ենթակայի հատկանիշի մեկ՝ եզակի միավոր: «Ժողովուրդ իմ էք դուք» (Ա, 472, 3) նախադասության մեջ եթե ԴՈՒՔ-ը և էՔ-ը համապատասխանաբար ենթակայի և ստորոգյալի թվի համաձայնությունն են արտահայտում, ապա ստորոգյալի մաս կազմող ԺՈՂՈՎՈՒՐԴ ստորոգելիական վերադիրն էլ արտահայտում է թվային այն հարաբերությունը, թե ԴՈՒ-երի համահավաքականությունը արտահայտող ԴՈՒՔ-ը առանձին-առանձին ժողովուրդներ են, թե՛ մի ամբողջություն, մեկ՝ եզակի միավոր: Ահա մի քանի օրինակ ևս. «Երկինք արքա իմ են» (Ա, 181, 22), «Դուք էիք մեր ամուր պարիսպ ապաստանի» (Եղ., 56, 16), «Երանի այնոցիկ, որ սուրբ են սրտիւք» (Յ, 109), «Գործոյ ինչ դուք չէք իմաստուն բանից» (Ղ, 169, 27):

Ա. Բագրատունին հոգնակի ենթակային եզակի թվով ստորոգելիական վերադիր հատկացնելու պատճառ է համարում և այն, որ «Որք (ստորոգելիական վերադիրները—Ա. Զ.) ընդէականին կից վարեալ իբրև մի բայ առեալ իցեն, սովորաբար եզակի դնին. Ողջ լերուք, և մեք մեզէն ողջ եմք»⁵:

Իսկ եթե հեղինակն ուզում է շեշտած լինել, որ հոգնակի, բազմակի կամ հավաքական ենթակայի հատկանիշները տարբեր միավորներից են կազմված, ստորոգելիական վերադիրը դնում է հոգնակի թվով: Այդ լինում է մեծ մասամբ այն դեպքերում, երբ ընդհանուր կամ վերացական բառ-ենթակային մասնավոր կամ թանձրացական բառ-հատկանիշ է վերագրվում: Ահա մի քանի օրինակ. «Ազգն արեւ յաղթահասակք են» (Թիւք, ԺԳ, 33), «Երկոքին կող-

⁴ Եզակի ենթակայի հանդույրը հոգնակի ստորոգելիական վերադիր ազդեցությամբ կարող է հոգնակի դրվել:

⁵ Խոսքը չի վերաբերում քաղաքավարական ձևերին, երբ խոսակցին ասում են ԴՈՒՔ, իսկ իրեն՝ ՄԵՔ:

⁶ Ա. Բագրատունին, Հայերէն քերականութիւն ի սկստս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 275, § 598:

մանքն միոյ բարերար կամացն արբանեակի՝ են և աշակերտի» (3, 45), «[Դուք] մեր բնիկ տեսա՞րք էք, և մեք ձեր բնիկ ծառայի՞ եմք» (Ղ, 169, 1), որտեղ ԱԶԳ-ը բաղկացած է առանձին և բազմաթիվ ԱՐՔ-ից, ԿՈՂՄԱՆՔ-ը՝ ԱՐԹԱՆԵԱԿՔ-ից և ԱՇԱԿԵՐՏՔ-ից, ԴՈՒՔ-ի մեջ մտնող ամեն մի միավորը (ԴՈՒ-ն) մի-մի Տէ՛՛ է, իսկ ՄԵՔ ամեն մեկս առանձին-առանձին ՄԱՌԱՅՔ ենք: Չենք կարող ընդունել Միք. Սալլանթյանի այն պնդումը, թե «Զայս ուղղական խնդիր բացից, մանաւանդ էականաց, բաղցր լինի դնել միշտ եղակի թուով, ևս և երբ բայն և ենթական իցէ յոգնակի, զի անախորժ է ականջաց յոգնական սոցիւն»⁷: Բանն այն է, որ ստորոգելիական վերադրի թիվը որոշելիս հիմք ընդունել միայն ախորժալուր կամ ոչ ախորժալուր լինելու հանգամանքը՝ նշանակում է միակողմանի մոտեցում ցուցաբերել:

Սակայն հոգնակի, բազմակի կամ հավաքական ենթակաների ստորոգելիական վերադիրը եզակի կամ հոգնակի թվով դնելը միայն նրա թվային հարաբերությունն արտահայտելուց չի կախված, այլև այն բանից, թե ստորոգելիական վերադիր-խոսքի մասը Ք հոգնակիակերտ վերջավորությունն ստանալով իմաստափոխության չի՞ ենթարկվում արդյոք, ո՞ր խոսքի մասն է հանդես գալիս որպես ստորոգելիական վերադիր: Մյուս կողմից էլ շատ միակողմանի կլինեն, եթե ենթական և ստորոգելիական վերադրի թվի համաձայնությունը ամբողջությամբ պայմանավորեն ստորոգելիական վերադրի խոսքի մասային հատկանիշով, ինչպես այդ անում է Վ. Չալրխյանը⁸:

Ք հոգնակիակերտ վերջավորությունն ընդունելուց խուսափում են հատկապես այն ստորոգելիական վերադիրները, որոնք արտահայտված են ածականով: Այդ մասամբ բացատրվում է նրանով, որ Ք ստանալու դեպքում այնպիսի ածականներ, ինչպես ՀԱՃՈՅ, ՊԻՏՈՅ, ԸՆՏԱՆԻ, ԱՐԺԱՆԻ, ԲԱՐԻ, ԼՍԵԼԻ, ԱՄԾԹԱԼԻ⁹, կփոխեն իրենց իմաստը. հաճոյ-հաճոյք, ընտանի-ընտանիք, լսելի-լսելիք զույգերը բոլորովին այլ իմաստներ են արտահայտում: Այդ է պատճառը, որ «Անունտանի են շարիք ի բնութենէ նորա» (Ե, 16), «Եւ դատարկ աստուածք ո՞ւմ պիտոյ իցեն» (Ե, 16), «Են առաքինութիւնք, որ ոչ են ճանոյ» (Ե, Խ, 215), «Զի որք այսպիսի վարուք հանդիսանան, նոքա են արժանի Հոգւոյն սրբոյ օծման» (3, 49), «Բարի են գործք» (3, 221), «Արուեստագէտքն անգոսնին և ամօթալից լինին» (3, 53), «Ենովս և Ենովք և Նոյ հաճոյ եղեն Աստուծոյ» (3, 160), «Եկք Պարսից գնդին լսելի եղեն»¹⁰ (Ղ, 121, 35) և այլ նախադասություններում ստորոգելիական վերադիրը Ք չունի:

Բայց միայն իմաստափոխությունը չէ պատճառ, որ ստորոգելիական վերադիրները հոգնակիի Ք վերջավորությունը չեն ընդունում, այլ նաև այն, որ որոշ բառերի վերջում Ք-ի հնչումը ախորժալուր չէ. «Ամենայն ծածկեալք նմա յայտնի են»¹¹ (Ա, 194, 16), «Սուլուր էին մարդիկ երկիր պագանել անշունչ

7 Միք. Սալլանթյան, Քերականութիւն դրարառ լեզուիս հայոց, Մոսկով, 1827, էջ 264:

8 Վ. Չալրխյան, Քերականութիւն հայկազնեան լեզուի, Վիեննա, 1885, էջ 223:

9 Համաբարբառում արժանի-ն՝ 11, քարի-ն՝ 10, հաճոյ-ը՝ 5 նախադասություններում հոգնակի ենթակաների ստորոգելիական վերադիրներն են, սակայն ոչ մի անգամ հոգնակի թվով չեն դրվել (բացի բարի-ից, որը մեկ անգամ հոգնակի թվով է հանդես եկել: Տե՛ս ստորև):

10 Չնայած Եկք-ի համար Ղ. Փարպեցին 65-րդ էջի 6-րդ տողում ունի եզակի թվով ստորոգյալ:

11 Յայտնի-ն Աստվածաշնչում 2 տեղ (ԱՍ, ԺԵ, 11 և ԺԶ, 2) հոգնակի ենթականի ստորոգելիական վերադիր է և 2 տեղում էլ հանգես է գալիս առանց Ք-ի:

պատկերաց մեռելոց» (Ա, 47, 1), «Չեն սովոր դժոխք» (Ե, 172), «Անպատու էին սիրտք մարդկան» (Ա, 268, 6), «Նոքա և այժմ կենդանի են և յաւիտեան կենդանի են լինելոց»¹² (Ա, 289, 15), «Հոգիք մտաւորք կենդանի են և անմահ» (Յ, 15), «Պահք զօրացուցիչ են» (Յ, 98), «Բազմադիմի են Խախտիք» (Յ, 147), «Մեք ոչ միայն խեղանաց և եք պատրաստ եմք վասն անուանն Քրիստոսի. այլ և քերանաց և մահու»¹³ (Ղ, 105, 40), «Դուք ուշիմ լերուք» (Ղ, 88, 38). «Այլ նոքա... չլինէին ունկնդիր»¹⁴ (Մ, 202, 17), «Երկինք ետեղակալ են»¹⁵ (Ե, 131):

Այդ չի նշանակում, իհարկե, որ նման ածական-ստորոգելիական վերադիրներին հոգնակի թվով հանդես գալիս լինվին բացառված է: Թեև սակավ, այնուամենայնիվ ունենք օրինակներ, որտեղ և՛ իմաստափոխության, և՛ ախորժալուր չլինելու «վտանգը» անտեսվում է. «Ոմանք կատարելութեան հասնալք մարտիրոսական պսակին լինին արժանիք» (Ղ, 35, 26), «Կէսքն կրելիք են և կէսքն ուտելիք» (Ե, 103), «Պարգևք բարիք են, ողորմութիւն ամենեցուն» (Տովբ, Դ, 12), «Կենդանիք են և չեն մեռեալք» (Ա, 121, 17), «Մեք՝ որ կենդանիք եմք և որ մնացեալքս լինիմք» (Ա, 309, 8), «Ամենայն խորհեալքն ի նոցանէ և պատճառաբանութիւնք և արարուածք քերիք են և անկատարք» (Ղ, 50, 28), «Չարիքն... կամածինք են և ոչ բնականք» (Ե, 43), «Ինքեանք դարձեալ անվրնասք. աներևոյթք լինէին» (Ղ, 87, 2), «Պատուդքն վտիտք էին և քառամք, և բերքն պակասք և անմահք» (Ղ, 33, 13):

Աստվածաշնչում բարի-ն մեկ (Տովբ, Դ, 12), կենդանի-ն վեց (ԹԺ, Թ, 5. ԹՅԱԱ, Դ, 9. ՊԹԿԲ, Դ, 11, Ե, 15. ՊՏԿ, Գ, 7. ՊԹԹԱ, Դ, 14), պատրաստ-ը չորս (ԹԻԼ, ԺԶ, 16. ԳՅ, Ը, 4. Մատթ., ԻԴ, 44. Ղուկ., ԺԲ, 40) անգամ հոգնակի թվով են հանդես գալիս որպես ստորոգելիական վերադիր:

Դերանունները նույնպես պատկանում են այն ստորոգելիական վերադիրներին դասին, որոնք անտեսելով ենթակայի հոգնակի լինելը, բաղմակիությունը կամ հավաքական իմաստ ունենալը, մեծավ մասամբ եզակի թվով են դրվում: Այդ վերաբերում է հատկապես ցուցական, հալցական ու հարաբերական դերանուններին: «Այս են աստուածք քո» (Ելք, ԼԲ, 4), «Ձի այն են տօնք տեառն» (Ղևտ., ԻԴ, 4), «Եւ անուանք գլխաւորաց աշակերտացն ժողովելոցն են այս» (Կ, 92, 12), «Եւ անուանք են այս» (Կ, 92, 12), «Որոց անուանք են այս» (Եղ., 42, 21), «Ուրախութիւնք այն են» (Ա, 36, 13), «Գլխաւոր գաւառք այս էին» (Փ, IV, ԺԴ, 151), «Ձի բազումք այն են» (Ա, 4, 5), «Ով են ոտքա իբրև զամպս թռուցեալ» (Ա, 310, 2), «Եւ ո՞վ իցեն պահպանեալքն» (Ա, 341, 3), «Ով են լերինք այնորիկ» (Փ, IV, ԾԴ, 217):

Հոգնակի թվով դրված ցուցական դերանուն-ստորոգելիական վերադիր գտնում ենք Աստվածաշնչի ԹԻԼ գրքում, այն էլ մի քանի օրինակ միայն: «Եւ սոքա են որդիք Ղևեայ» (ԹԻԼ, Գ, 17), «Սոքա են գունդր» (ԹԻԼ, Գ, 20,

¹² Կենդանի-ն Աստվածաշնչում 14 նախադասության մեջ հոգնակի ենթակայի ստորոգելիական վերադիր է՝ եզակի թվով: Հոգնակի թվով է դրվել ԹԺ, Թ, 5. ԹՅԱԱ, Դ, 9. ՊԹԿԲ, Դ, 11, Ե, 15. ՊՏԿ, Գ, 7. ՊԹԹԱ, Դ, 14 տներում:

¹³ Աստվածաշնչում պատրաստ-ը 12 տեղ եզակի և 4 տեղ հոգնակի թվով է հանդես գալիս որպես հոգնակի ենթակայի ստորոգելիական վերադիր:

¹⁴ Աստվածաշնչում ունկնդիր-ը որպես ստորոգելիական վերադիր ոչ մի անգամ հոգնակի թվով չի դրվել, մինչդեռ եզակի թվով՝ 19 անգամ:

¹⁵ Նույն երկի հաջորդ էջում նույն ենթակայի նույն ստորոգելիական վերադիրը հոգնակի թվով է դրված:

22, 27, 33): Երկրմաստ է Եղնիկ Կողբացու «Սոֆա են գայլը գառնազգեստը» (Ե, Խ, 210) նախադասությունը, որի ՍՈՔԱ-ն հավասարապես և՛ ենթակա կարող է լինել, և՛ ստորոգելիական վերադարձ՝ նայած թե հեղինակը որ բառի վրա է դրել շեշտը:

Եղիշեի մոտ մի տեղ ՔԱՆԻ-ն որպես ստորոգելիական վերադարձ թվով համաձայնել է ենթակային. «Քանիք իցեն պարագլուխք» (Եղ., 96, 8):

Ինչ վերաբերում է գոյականներին, ապա սրանք էլ ենթարկվում են նույն օրինաչափությանը, իսկ նախորդ խոսքի մասերը, այսինքն գոյական-ստորոգելիական վերադարձները հոգնակիի Ք վերջավորությունը չեն ընդունում այն դեպքում, երբ հոգնակի, բազմակի կամ հավաքական ենթակաները ստորոգելիական վերադարձի միջոցով արտահայտված անձի, իրի, երևույթի բազմակիություն չեն ենթադրում: «Են մեզ պահք բժիշկ» (Յ, 96), «[Տեղիք] ապա յանուն աստուածութեանն սրբեցան և եղեն տուն աղօթից» (Փ, III, Գ, 20), «Ժողովուրդ իմ էք դուք» (Ա, 472, 3), «Երկինք արո՞ղ իմ են» (Ա, 181, 22), «Պատուիրանք տեառն լոյս են» (Փ, IV, Ե, 117):

Այն գոյական-ստորոգելիական վերադարձները, որոնք ելնելով ենթակայի թելադրած անհրաժեշտությունից պետք է բազմակիություն ցույց տան, հոգնակի թվով են հանդես գալիս. «Դուք էք մարդիկ վատք և անպիտան» (Ղ, 123, 22), «Լիցուք վկայք» (Ա, 57, 8 և 13), «Մեք եմք զինք արեան որդույ քո» (Ա, 49, 10), «Փրկութեանն նոցա լինէին պատմառք» (Փ, III, ԺԳ, 53), «Եղեն սուրբքն աղբիւրք հրեղէնք» (Յ, 100), «Եւ գառինքն գայլք եղեն թուխք» (Ա, 385, 18), «Իսկ մարմինք նոցա և ոսկերք նոցա Աստուծոյ տաճարք են» (Ա, 285, 10), «Անօք կաւեղէնք իսկ են մարդիկ» (Ա, 266, 8), «Եւ են նոքա դարանք» (Եղ., 134, 23)¹⁶:

Գրաբարում աչքի է զարնում շատ հետաքրքրական մի երևույթ. երբ բաղադրյալ ստորոգյալով նախադասության հանգույցը զեղչված է, թվական-ստորոգելիական վերադարձը Ք չի ունենում, իսկ եթե ստորոգելիական վերադարձը ոչ թվական խոսքի մաս է՝ ունենում է: Մեծ է այստեղ այն հավանականությունը, որ մեկից ավելի թիվ ցույց տվող թվականն ինքնըստինքյան հոգնակիության իմաստ ունի, մի բան, որից զուրկ է ոչ թվական-ստորոգելիական վերադարձը: Վերջինս քանի որ զուրկ է նաև հանգույցից, ակամայից իր վրա է վերցնում հոգնակիություն արտահայտելու պարտականությունը: Կարծում ենք, որ այս է հիմնական և միակ պատճառը, որ ոչ թվական-ստորոգելիական վերադարձները, երբ շունեն հանգույց, անպատճառ հոգնակի թվով են հանդես գալիս: Այդ հատկապես վառ է երևում Աստվածաշնչի Ելք գրքի Ի՛ է գլխի 10—19 տներում, Մնացորդաց Ա գրքի է, Թ գլուխների մի քանի տներում, Եզր գրքի Բ գլխում, Թիւք-ի Ա գլխում և այլուր: Այդ տարբերությունը ավելի ակնառու դարձնելու համար նպատակահարմար է հոգնակի, բազմակի կամ հավաքական ենթակաների ոչ թվական-ստորոգելիական վերադարձների և «եզակի» թվական-ստորոգելիական վերադարձների օրինակները բերել զուգահեռաբար:

¹⁶ Ստ. Մալխասյանը ստորոգելիական վերադարձի համաձայնության ոչ մի օրինաչափություն չի նկատում. «Եթե ենթական յոգնակի է և ասացուածը (ստորոգյալը—Ա. Ձ.) գոյական կամ ռժական անուն եմ. կամ բայերով՝ այս բայերն (հանգույցները—Ա. Ձ.) յոգնակի են գրում, իսկ գոյականը և ռժականը թի՛ եզակի, և թի՛ յոգնակի, առանց որոշ կանոնի»: Տե՛ս նրա «Գրաբարի համաձայնությունը», Թիֆլիս, 1892, էջ 35:

Հոգնակի ոչ թվական-ստորոգելիական
վերագիրներ

Եւ քառասուն խարիսխը նոցա արծա-
րիւ (Եւր, ԻԶ, 21), խոյակը նոցա ոս-
կիւ (Եւր, ԻԶ, 32), Եւ սիւնը նորա, և խարիսխը
նոցա պղնձիւ քսան, և օղբ նոցա քսան,
և խոյակը նոցա արծաթիւ (Եւր, ԻԷ,
10), Ամենայն սիւնը սրահին շուրջա-
նակի արծաթապատիւ, և խոյակը նոցա
արծաթիւ, և խարիսխը նոցա պղնձիւ
(Եւր, ԻԷ, 17), Եւ խարիսխը նոցա պղ-
նձիւ (Եւր, ԻԷ, 18), Եւ ամենայն կահ
խորանին և ամենայն գործի նորա և
ամենայն ցիցք սրահին՝ պղնձիւ (Եւր,
ԻԷ, 19), Եւ խոյակը նոցա ոսկիւ, և
շորք խարիսխը նոցա արծաթիւ (Եւր,
ԼԶ, 36), Եւ ամենայն ցիցք սրահին և
խորանին շուրջանակի պղնձիւ (Եւր,
ԼԸ, 20), Իշխանք տանց տոհմից իւրե-
անց զօրաւոր ուժով (ՄԱ, է, 7), Ամե-
նեքեան սոքա որդիւ Ասերայ, ամենե-
քեան իշխան և պետի տոհմիցն, ըն-
տիրք զօրաւոր ուժով, իշխան և ա-
ռաջնորդ (ՄԱ, է, 40), Եւ այսորիկ
անուամբ նոցա (ՄԱ, Թ, 44), Քա-
ղաքք ձեր հրձիգ (ՄԵ, Ա, 7), Այլ ի
բէշին մի են երկոքեան. նոքա երկա-
րմատեան, և սոքա նոյնպիսի, նոքա
արեւապաշտ, և սոքա ծառայի արեւա-
կան (Ե, 81) և այլն:

«Եզակի» թվական-ստորոգելիական
վերագիրներ

Սիւնը նոցա տասն, և խարիսխը նո-
ցա տասն (Եւր, ԻԷ, 12 և 13), Սիւնը
նոցա երեւ, և խարիսխը նոցա երեւ
(Եւր, ԻԷ, 14 և 15), Եւ սիւնը նոցա
շորք, և խարիսխը նոցա շորք (Եւր, ԻԷ,
16), Հանդէս նոցա յազգէն Ռուրէնի
փառասուն և վեց հազար և հինգ հարեւ
(Թիւր, Ա, 21), Հանդէս նոցա ի ցեղէն
Շմաւոնի յիսուն և ինն հազար և երեւ
հարեւ (Թիւր, Ա, 23), Զօրաւորք կար-
գեալք ի պատերազմ՝ Երեսուն և վեց
հազար (ՄԱ, է, 4), Մատունը նորա վեց
վեց (ՄԱ, Ի, 6), Ամենայն կահք ոսկե-
ղէնք և արծաթեղէնք՝ հինգ հազար և
շորք հարեւ (Եզր, Ա, 11), Որդիք Փա-
րոսայ՝ Երկու հազար հարեւ Եւթունա-
սուն Երկու (Եզր, Բ, 3), Որդիք Յեղա-
մայ Երկու հազար Երկերիւ յիսուն և
շորք (Եզր, Բ, 7), Որդիք Աղգինեայ շո-
րք հարեւ յիսուն և շորք (Եզր, Բ, 15),
Որդիք Եղեմարայ հազար Երկերիւ յի-
սուն և շորք (Եզր, Բ, 31), Եւ կրտսերք
նոցա՝ Եւթն հազար երեւ հարեւ երե-
սուն և Եւթն, և Երգիչք սաղմոսաց նո-
ցա արք և կանայք՝ Երկերիւ: Զիք նո-
ցա Եւթն հարեւ երեսուն և վեց, ջորիք
նոցա Երկերիւ փառասուն և Եւթն,
ուղտք նոցա՝ շորք հարեւ երեսուն և
հինգ, էջք նոցա վեց հազար Եւթն հարեւ
փառ (Եզր, Բ, 65):

Հատկապէս կանգ առնենք «Երկինք Ետեղակալ են, և լուսաւորք՝ գնա-
լունք» (Ե, 131) նախադասութեան վրա: Ինչպէս տեսնում ենք, բարդ համա-
դասական նախադասութեան առաջին եզրում հոգնակի ենթակայի ստորոգելիա-
կան վերագիրը ևզակի թիւ ունի: Բավական է, որ Երկրորդ եզրում հանգույցը
զեղչվի, մյուս հոգնակի ենթակայի ստորոգելիական վերագիրը կզրվի հոգնա-
կի թվով: Եվ վերջապէս այդ չի՝ ապացուցում արդյոք Մ. Խորենացու «Հայոց
պատմութեան» այն հատվածը, որտեղ հեղինակը կարդում է «Ողբ վասն
բառնալոյ թագաւորութեանն Հայոց յազգէն Արշակունեաց և Եպիսկոպոսա-
պետութեանն յազգէն սրբոյ Գրիգորի»: Ահա այդ ողբի՝ մեր միտքը հաստա-
տող մասը. «Վարդապետք տխմարի և իննհաւան, անձամբ առեալ և ոչ յԱս-
տուծոյ կոշեցեալ. արծաթով ընտրեալը և ոչ Հոգւով. ոսկեւէր, նախանձում».

թողեալ զհեզութիւն, յորում ևստուած բնակէ, և գայլք հղեալ զիւրեանց հօտս զիշատելով:

Կրօնաւորք կեղծաւորն, անձնացոյցն, սնափառն, պատուասէրն քան թէ աստուածասէրն:

Վիճակաւորք հպարտն, դատարկակացն, գրաբսնն, ծոյլն, ատեցովն արուեստից և վարդապետական բանից, սիրողն վաճառաց և կատակերգութեանց:

Աշակերտք հեղգն առ ուսումն և փոյթն առ ի վարդապետել, որք նախ քան գտեսութիւնն աստուածարանն:

Ժողովականք վէսն, ստահակն, անվաստակն, արբեցողն, վնասակարն, փախշողն ի ժառանգութենէ:

Զօրականք անարիւն, սնապարծն, զինատեացն, պղերզն, հեշտասէրն, անժովկալն, կողոպտիչն, պիճարբուն, յուզարկուն, համաբարոյն աւազակաց:

Իշխանք ապստամբն, գողակիցն գողոց, կծիւն, ժլատն, ազահն, յափըշտակողն, աշխարհաւերն, աղտեղասէրն, ծառայիցն համամիտն:

Դատաւորք տմարդիւն, սուտն, խաբողն, կաշառառուն, անընտրողն իրաւանց, անհաստատն, հակառակողն... Հողմք բնաբարն, խորշակսրբերն, ախտահաւաք. ամպք հրլնկեցն, կարկտածուն. անձրեք անժամանակն և անպիտանն. օդք դառնաշունչն, եղեմնարկուն...:

Զի թագաւորք տիրեալն խիստք և շարաշարք... վերակացուք անհարթաբարն, անողորմն. սիրելիք դաւանանեալն, և թշնամիք զօրացեալն... սովք անբաւն, և հիւանդութիւն և մահք բազմօրինակն»¹⁷ (Մ, 363, 14—366, 1):

Սակավաթիվ դեպքերում կան շեղումներ: «Առաջաստքն հարևր կանգուն յերկայնութիւն» (Ելք, Իէ, 11), «Խորիսխ մեղու բանք բարիք»¹⁸ (ԱՍ, ԺԶ, 24): Առաջին նախադասութեան մեջ ԿԱՆԳՈՒՆ ստորոգելիական վերադրի Ք վերջավորութիւնն շունենալը բացատրվում է նրանով, որ ստորոգելիական վերադիրը ունի այնպիսի մի որոշիչ (հարևր), որը փոխարինում է հոգնակիի Ք վերջավորութեանը: Ինչ վերաբերում է երկրորդ նախադասութեանը, ապա, ըստ երևույթին, ԽՈՐԻՍԽ-ի մեջ հավաքականութեան իմաստ է առնված:

Ունենք և մի օրինակ, որտեղ եզակի ենթակայի գոյական-ստորոգելիական վերադիրը հոգնակի է դրված. «Ինն կանգուն երկայնութիւն նորա, և չորք կանգուն լայնութիւն նորա» (ԵԾ, Գ, 11): Այս բացատրվում է նրանով, որ ԿԱՆԳՈՒՆՔ ստորոգելիական վերադիրը Ք է ստացել ԶՈՐՔ-ի Ք-ի ազդեցութեամբ, այսպես առաջին նախադասութեան նույն ԿԱՆԳՈՒՆ-ը աւելի շատ «իրավունք» ունի հոգնակի թվով դրվելու:

Մի քանի դեպքերում էլ հավաքական իմաստ ունեցող ենթակաների թվական-ստորոգելիական վերադիրն է Ք ստանում: «Ամենայն արու յամսօրէից և ի վեր՝ փառն և երկու հազարն» (Թիւք, Գ, 39), «Թիւ նոցա փառն և երկու ճազարն և երեսուն և չորն» (ՄԱ, է, 7), «Թիւ նոցա ի մարտ պատերազմի արք փառն և վեց հազարն» (ՄԱ, է, 40): Կարելի է արդյոք այստեղ պնդել, որ այս նախադասութիւններում (հատկապես առաջին և վերջին) թվական-ստորո-

¹⁷ Հատկանշական է, որ այս հատվածը նույն ձևով (զեղչված օժանդակ բայով) է թարգմանվել և՛ աշխարհարար, և՛ ֆրանսերեն թարգմանություններում:

¹⁸ Շրջուն նախադասութիւն է. ենթական ԲԱՆԶ-ն է, ստորոգելիական վերադիրը՝ ԽՈՐԻՍԽ: Համոզվելու համար տե՛ս սրան հաջորդող նախադասութիւնը և տողատակի ծանոթագրութիւնը:

ղելիական վերադիրների Ք ընդունելու պատճառը նրանց ամբողջական, կլոր¹⁹ լինելն է։ Իհարկե ոչ, քանի որ ունենք շատ օրինակներ, որտեղ ամբողջական թվերը թվական որոշիչներ ունենալով հանդերձ Ք չեն ընդունում (տե՛ս մեր նախորդ զուգահեռ օրինակները, ինչպես նաև հետևյալ աղբյուրները. Ծզր, Բ, 39. Թիւք, Ա, 27, 29, 31, 33, 35, 37, 39, 41, 43 և այլուր)։ Եվ, ի վերջո, չէ՞ որ վերջին օրինակների II նախադասությունում շունենք ամբողջական թիվ, բայց ՀԱԶԱՐ-ը ունի Ք։

Վերահիշյալ անաժից չի բխում, որ հոգնակի, բազմակի կամ հավաքական ենթակայի թվական-ստորոգելիական վերադիրը Ք չի ունենում միայն հանգույցը զեղչելիս, և կամ հանգույցի առկայությամբ թվական-ստորոգելիական վերադիրը եզակի է դրվում։ Ծիշտ է, ոչ հաճախ, այլ երբեմն հանգույց ունեցող հոգնակի ենթակայի թվական-ստորոգելիական վերադիրը կարող է և՛ Ք ունենալ, և՛ չունենալ. «Եւ եղեն մեռեալք ի սատակմանն չորեքտասան հազար և եւթն հարև» (Թիւք, ԺԶ, 49), «Եւ եղեն անկեալք յաւուր յայնմիկ յառնէ մինչև ցկին՝ երկոտասան հազար» (ԳՅ, Ը, 25), «Եւ էր ամենայն եկեղեցին միանգամայն չորք բերք և երկու հազար և երեք հարև Վաքսուն» (Ծզր, Բ, 64), «Եւ եղեն մեռեալքն ի հարուածոցն յայնցանէ քսան և չորք հազարք» (Թիւք, ԻԵ, 9)։

Ամփոփենք. ենթակայի և ստորոգելիական վերադրի թվի համաձայնությունը ինքնանպատակ կամ կամայական երևույթ չէ, այլ արտահայտում է իրական աշխարհի որոշակի իրողություններ։ Այդ համաձայնության ժամանակ դեր են կատարում այնպիսի հանգամանքներ, ինչպես ստորոգելիական վերադրի թվային հարաբերությունը, իմաստափոխությունը, խոսքի մասային հատկանիշը և այլն։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՆԱԼԻ

Ա—Ազաթանգեղեայ Պատմություն հայոց, Տփղիս, 1909

ԱՍ—Առակք Սողոմոնի (Աստվածաշունչ)

ԲԺ—Բանք Ժողովրդի (Աստվածաշունչ)

ԳՅ—Գիրք Յեսուայ (Աստվածաշունչ)

Ե—Եզրկայ Կողբացույ Եղծ աղանդոց, Թիֆլիզ, 1914

Ե, Խ—նորին Խրատք

Եղ.—Եղիշէի Վասն Վարդանայ և հայոց պատերազմին, Երևան, 1957

ԵԾ—Երկրորդումն օրինաց (Աստվածաշունչ)

ԹՅԱԱ—Թուղթ Յովհաննու առաքելոյ, Ա (Աստվածաշունչ)

Կ—Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941

Ղ—Ղազարայ Փարպեցույ Պատմություն հայոց, Տփղիս, 1904

Ղևտ.—Ղևտական (Աստվածաշունչ)

Ղուկ.—Աւետարան ըստ Ղուկասու (Աստվածաշունչ)

Մ—Մովսիսի Խորենացույ Պատմություն հայոց, Տփղիս, 1913

¹⁹ «Ամբողջական» կամ «կլոր» պայմանական բառի տակ հասկանում ենք մի թիվ, որը թվական մի դրություն (պրոֆ. Հր. Անաոյանի տերմինն է. տե՛ս նրա «Լիակատար քերականություն հայոց լեզվի», հ. 1, Երևան, 1952, էջ 137—176) է (հարև, հազար, բեր), որը կարող է ունենալ թվական որոշիչ (երեք հազար, չորք բերք և այլն) և դուրկ է տասնավորներից կամ միավորներից։

ՄԱ—Միացորդաց Ա (Աստվածաշունչ)

Մտթ.—Անտարան ըստ Մտթնուի (Աստվածաշունչ)

Յ—Յաճախատում, Վենետիկ, 1954

ՊԹԹԱ—Պաղոսի առաքելոյ Թուղթ առ Թեսաղոնիկեցիս, Ա (Աստվածաշունչ).

ՊԹԿԲ—Պաղոսի առաքելոյ Թուղթ առ Կորնթացիս, Բ (Աստվածաշունչ)

ՊՏԿ—Պաղոսի առաքելոյ Թուղթ առ Կորնթացիս (Աստվածաշունչ)

Փ—Փառաստի Բուրաղացոյ Պատմութիւն հայոց, Վենետիկ, 1914

А. С. Зейтунян

СОГЛАСОВАНИЕ В ЧИСЛЕ ИМЕННОЙ ЧАСТИ СКАЗУЕМОГО С ПОДЛЕЖАЩИМ В СТАРОАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Р е з ю м е

Согласование в числе именной части сказуемого с подлежащим—один из важных вопросов согласования сказуемого с подлежащим, так как именная часть сказуемого считается его первичной формой. Число именной части сказуемого зависит от численного отношения признака, приписанного подлежащему. Подлежащее (единственного и множественного числа, многочленное, собирательное) может получить именную часть сказуемого то в единственном, то во множественном числе. При таких случаях связка выполняет роль по согласованию сказуемого, а именная часть выражает отношение числа признака.

Подлежащее в единственном числе получает именную часть сказуемого во множественном числе в тех случаях, когда 1. подлежащему приписываются неоднократные признаки; 2. именная часть является plur. tantum (անհղահիւսիս բառ).

Подлежащее во множественном числе имеет именную часть сказуемого в единственном числе, когда ему приписывается единственный признак, а когда признаки многочисленные—именная часть ставится во множественном числе.

Согласование числа зависит и от того, какая часть речи является именной частью сказуемого.

Если отсутствует связка, числительное—именная часть сказуемого ставится в единственном числе, в других случаях именная часть в подавляющем большинстве предложений ставится во множественном числе.

Значит на согласование числа могут влиять и приписывание признака числа подлежащему, и изменение смысла слов, и категория части речи и т. п.